

ԳՐՔԵՐԻ ՀԵՏ

«ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԱՐԱԳՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՅՈՒՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ»

(Համեմատական ուսումնասիրություն)

1975 թվականի վերջերին Բուխարեստի Աստվածաշնչական ռումինական ինստիտուտը հրատարակել է ռումիներեն լեզվով Մայր Աթոռի երիտասարդ միաբան և Ռումինիայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի վերոհիշյալ արժեքավոր ուսումնասիրությունը՝ որպես աստվածաբանության դոկտորի թեզ:

Տ. Զարեհ ծ. վարդապետն այս նյութն ընտրել է Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ: Այս թեման հաստատվել է նաև Նորին Սրբություն Ռումինիայի Տ. Ժուստինիան Պատրիարքի կողմից:

Գրքի բովանդակալից Հառաջաբանը գրել է գլխավոր ռեֆերենտ և աստվածաբանության հմուտ դասախոս պրոֆ. Էնե Բրանիշտե ավագ քահանան, որը քաջածանոթ է նաև հայ եկեղեցու պատմությանը և մատենագրությանը:

Սույն ուսումնասիրությունը բաղկանում է 164 էջերից՝ բաժանված երեք մասերի:

Հրատարակված գործն ունի հետևյալ գլուխները՝

Ա. գլուխ. էջ 13—45: **Ծիսական արարողությունների մասին ընդհանուր ակնարկ:** Պատարագը առաջին երեք դարերի ընթացքում. ծիսական միաձևություն. ծիսական արարողությունների կազմավորումը և տեղական ծեսերը Դ դարից հետո. առաքելական պատարագներ և ավելի ուշ շրջանի պատարագներ:

Բ գլուխ. էջ 47—147: **Հայկական պատարագը,** որն ամբողջությամբ նվիրված է **հայկական պատարագի** ուսումնասիրությանը:

Գրքի սույն՝ երկրորդ մասն ունի հետևյալ ենթագլուխները.

1. Հայկական պատարագի ծագումը. նրա աղերսը ս. Հակոբի առաքելական պատարագի հետ. պատարագի հայերեն թարգմանությունը և հետագա բարեփոխությունները:

2. Հայկական պատարագի հին ձեռագրերը, տպագրություններն ու թարգմանությունները. այս բնագավառում կատարված կարևորագույն ուսումնասիրությունները:

3. Հայկական արդի պատարագի բնագիրը և ժամանակակից կարգը՝ ռումիներեն թարգմանությամբ, ծանոթագրություններով և պատմական բացատրություններով:

4. Տարբերություններ, նմանություններ և հասարակաց գծեր հայկական պատարագի

և բյուզանդական ծեսի պատարագների միջև:

5. Տարբերություններ, նմանություններ, հասարակաց գծեր հայկական պատարագի և հին արևելյան եկեղեցիների (ոչ քաղկեդոնական) պատարագների միջև:

Arhim. Zareh BARONIAN

Liturghia Bisericii Armene
in cadrul celorlalte rituri liturgice răsăritene

6. Հայկական պատարագի վրա արևմըտյան ծեսերի ազդեցություններ:

7. Հայկական պատարագի հիմնական հատկանիշները քրիստոնեական մյուս պատարագների համեմատությամբ:

Գ գլուխ. էջ 148—154: Եզրակացություն. վերջաբան. մատենագիտություն: Հեղինակն օգտագործել է հայերեն և օտար լեզուներով շուրջ 200 աղբյուրներ:

Գ գլխի վերջում նշվում է հայկական պատարագի կարևորությունը ժամանակակից էկումենիկ շարժման տեսակետից:

Գրքում տրված է տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի համառոտ կենսագրությունը (էջ 163), ինչպես նաև նրա հայերեն և ռումիներեն լեզուներով հրատարակած հոդվածների ցանկը (էջ 164):

Գրքի Հառաջաբանում պրոֆ. Էնե Բրանիշտե ավագ քահանան նշում է սույն աշխատության կարևորությունը, ուր պատմական, արժեքավոր տեղեկություններ են տրվում հայ եկեղեցու պաշտամունքային կյանքի և ս. պատարագի մասին, պատարագ, որն «ուսուցողական մեծ ազդեցություն» է թողել հայ հավատացյալների «հավատքի և բարոյականի վրա»:

Պրոֆ. Էնե Բրանիշտեն կարևորությամբ արձանագրում է նաև այն, որ սույն գործում այլ եկեղեցիների սրբազան պատարագների համեմատական ուսումնասիրության շնորհիվ և քննադատական ճշգրիտ նշումներով ցույց է տրված, որ հայ եկեղեցու ս. պատարագը հավատարիմ է մնացել առաքելական, եկեղեցական հին ավանդությանց:

Հառաջաբանում գոհունակությամբ է նշվում, որ սույն աշխատության շնորհավորելի արժանիքներից մեկն է նաև հայկական պատարագի ռումիներեն լեզվով հաջող թարգմանությունը:

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով տ. Զարեհ ծ. վարդապետի դոկտորական սույն ուսումնասիրությունը, Իր հունվար 24 թվակիր նամակով հղել է նրան Իր շնորհավորանքի և օրհնության խոսքը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի նախկին շրջանավարտ և այժմ Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանին և նրան մաղթում նորանոր հաջողություններ՝ իր հետագա եկեղեցանվեր աշխատանքների ճանապարհի վրա:

Ա. Հ.